

Քառասուն տարի



Exported from Wikisource on 07/15/18

Աղբյուր. ԵԼԺ հ6, էջ [132](#)

ծ. — էջ [592](#)

1862 թվի գարնանը մի օր «Կռունկի» խմբագիր Մ. Աղաբեգյանի մոտ մտավ իր գրաշարներից մինը— մի 20–22 տարեկան գեղեցկադեմ բարձրահասակ տղա, «Մեղու Հայաստանի» լրագրի № 17 ձեռքին: Այդ №-ում նա տպել էր իր ոտանավորը, ուզում էր խմբագրի կարծիքն իմանալ:

Խմբագիրն առավ թերթը:

Հարկավոր է օգնել չքավորներին

Անուշիկ գարնան գվարթ օրերում գրավում են պատանու սիրտը ծաղկագարդ վայրեր, միտն են ընկնում Էնտեղի եղբայրքը և գնում է...

Բարձրանում է մի բարձր բլուր, նայում է չորս կողմը— ծաղկած դաշտեր, շենք, շինության, առուք, վտակք— ցնծությանբ լցված իջնում է ստորոտ:

«Էսքան բարության վայելողների
Տեսությանն է միայն փափագում»:

Եվ ահա հայտնվում է մի ծերունի, գավազանը ձեռքին, գլխակոր, շորերը մաշված, պատանին դիմում է սրան.

[[133](#)]

«Հայրի՛կ... ասա ինձ խնդրեմ,
Ինչպես եք այստեղ դուք կառավարվում,
Ունի՞ք կայք, կալված և հանգիստ կենցաղ,
Թե միշտ եք այդպես ստոր վիճակում:
Գլուխը շարժեց ծերունին տխուր.
– Ցավ է ինձ ասել, ասաց նա լալով.
Ահա անցանեն իմ կյանքի օրեր,
Բոլորն էլ սրտիս ցավ ու վիշտ տալով:
Տեսնում ես դու այդ սիրուն դաշտերը,
Որոնք գրավում են շատերի հոգին,
Չկարծես թե դրանց մենք ենք վայելում,

Այլ մեր ոսոխներն ու մեր թշնամին:
Իսկ մենք այս փոքրիկ տեղումը սխմված
Մնացել ենք անշարժ – տխուր վիճակում:
Արհեստ, գիր, լեզու, օրենք ասած բանըդ.
Չգիտենք թե ինչ են նշանակում:
Թե կամիս բոլոր մեր պակասության
Եվ մեր նեղության դառն պատճառներն
Իմանալ, որդյակ, դժվարին է,
Վասն զի լուռ են մեր լեզուներն»:

Լռեց ծերունին, տխրության ամպը աչքերը պատեց: Այդ «մեծ վիշտ պատճառեց»
պատանուն ու գնաց նա դեպի մյուս գյուղերը.

Բոլոր փորձանքներն աչքիս տակն առած,
Ընկա մեծամեծ սարեր ու ձորեր:
Ինչե՛ր են տեսնում, ով կարե պատմել,
Չայ կանայք բոկոտն՝ սուր-սուր քարերում
Ման գալիս տեսա, սիրտս, հոգիս թնդաց.
Տեսնում են շատ բան, բայց լուռ անցկենում:

Այս թշվառ աշխարհից գալիս է պատանին իր խեղճ բնակարանն ու սկսում մտածել.

Թե ի՞նչ միջոցով կարող են արդյոք
Ազգասեր անձինք այն որբոցն օգնել:

Ոչ դրամ, ոչ նյութ, չէ ինձ հարկավոր,
Միայն թե տեսնեն, քննեն, իմանան,
Թե ինչ է պատճառն, որ նրանք աղքատ,
Կարոտ են մնում արհեստի, ուսման:

Ու կանչում է.

Եկե՛ք իմ եղբարք, որդիք արամյան,
Միմյանց անխտիր կերպով մենք օգնենք,
Թե քաղաքացի և թե շինական
Նոր հոգի առած՝ իրարու գգվենք:

Խնամազիրը հավանեց:— Աշխատիր, ասաց շուսահատվիս, դու ապագա ունիս. միայն
այստեղ չմնաս... Խրատեց ու, ի՞նչ պետք է աներ, կրկին ուղարկեց տպարան:

Այդ ոտանավորի տակ ստորագրած էր՝ Ղազար Ս. Աղայան:

Դուք արդեն իմացաք, թե ով էր 40 տարի առաջվա այն գեղեցկադեմ, առողջ,
բարձրահասակ տղան: Նա, որ 40 տարի առաջ սկսել էր իր գրական գործն այս
երգով՝ «Պետք է օգնել չքավորներին», որոնք

«Արհեստ, գիր, լեզու, օրենք ասած բանըդ
Չգիտեն թե ինչ է նշանակում...»:

Նա 40 տարի առաջ բարձրացել է իր խավար հայրենիքի բլուրները ու իր
բարձրությունից ինչե՛ր, ինչեր է տեսել...

Ու այն օրվանից մտել է իր «խեղճ բնակարանը, սկսել է մտածել, թե ինչ միջոցով
կարող է օգնել... Ու բոլոր փորձանքներն աչքի տակն առած, ընկել մեծամեծ սարեր ու
ձորեր...

«Խավար էր այդ ժամանակ մեր աշխարհը, շատ էր խավար— լուսավոր մարդուն
պետք էր լապտերով փնտրել», ասում է նա իր ինքնակենսագրության մեջ: Ահա այդ
լապտերով գտած սակավաթիվ մարդիկ պետք է ամեն բան անեին, ամեն
պակասության հասնեին: Վեպ չկար— վեպ գրեին, ոտանավոր չկար— ոտանավոր
հորինեին, դասագիրք չկար—

դասագիրք կազմեին, վարժապետ չկար— վարժապետություն անեին...

Ահա այսպիսի մի ժամանակ երևաց Ղ. Աղայանը: Եվ այդ շրջանում, այս սերունդի մեջ
նա բռնում է մի շատ պատվավոր և առանձին տեղ: Նա նման չի մեր գրողներից ոչ
մեկին: Նա ամեն մի ճյուղի մեջ ցույց է տվել ինքնուրույն ճաշակ ու տաղանդ և երբեք չի

եղել երկրորդը:

Նրա «Երկու քույրը» մեր վիպական գրականության մեջ մինչև օրս նշանավոր գրվածք է, ինչպես «Տորք Անգեղը» մեր սակավաթիվ պոեմների շարքում, «Մանի՛ր, մանի՛ր» և նմանները մեր ժողովրդական քանաստեղծության մեջ: Բայց ո՞վ է մրցել նրա հետ, երբ նա «Անահիտ» և «Արեգնագան» է պատմել կամ «Գյուլնագ տատի հեքիաթը» և գրույց է արել երեխաների հետ կախարդական աշխարհներից: Ո՞վ է կարող մեր աշխարհքում շոշափել հայոց լեզվի և ուղղագրության խնդիրն առանց առաջ հիշելու Ղ. Աղայանի անունը, և, վերջապես, մեր նոր սերունդից ո՞վ կա ամբողջ ռուսահայքում, որ հայերեն լինի սովորած առանց Աղայանի դասագրքերի... Քառասուն տարի՛... Ասելը հեշտ է:

Հայոց մամուլը երբեք չի զբաղվել նրա գրական գործերով— քառասուն՝ տարի...

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](https://creativecommons.org/licenses/by-sa/3.0/)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- վազգեն
- Teak

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)